ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

17-ը հունիսի 2019թ.
ժամը 12^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Աշխատանք» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթին «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

- Հրավերի Հավելված N 5-ը /առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում/, Հավելված N 5.1-ը /կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների (սարքերի, սարքավորումների) մասին տեղեկանք/ Հավելված N 5.2-ը /կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև Հավելված N 5.2-ի աղուսակի 5-րդ սյունակում /գործունեության

ոլորտը և կատարած աշխատանքը/ հստակեցված չէ աշխատակցի գործունեության ոլորտները և կատարած աշխատանքները: Բացակայում է «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աշխատակցի մասնագիտական որակավորումը հավաստող դիպլոմի պատճենը: Որպեսզի հնարավոր լինի պարզել հրավերով պահանջվող լիցենզիայի էներգետիկ ներդիրի շրջանակներում իրականացված աշխատանքների ընդհանուր արժեքը անհրաժեշտ է ներկայացնել. 15.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/41-2 պայմանագի N1 Համաձայնագրով նախատեսված և 2016թ.ին իրականացված աշխատանքների կատարողական ակտերը: 03.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/35-1 պայմանագի N2 Համաձայնագրով նախատեսված և 2016թ.ին իրականացված աշխատանքների կատարողական ակտերը: 16.02.2017թ. կնքված ԲԸԱՀԱՇՁԲ-10/1-1 պայմանագրով սահմանված աշխատանքներից շինարարական մասի կատարողական ակտերը: 07.07.2017թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/9-4 պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները կամ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող գրություն: Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը արձանագրված անհամապատասխանության մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «Աշխատանք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել m.hokheyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

«Աշխատանք» ՍՊԸ-ն սահմանված կարգով և սահմանված ժամկետում շտկեց արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությանը, մասնավորապես՝ «Աշխատանք» ՍՊԸ կողմից ներկայացված նախկինում կատարված ՍԸԱՇՁԲ-10/41-2 պայմանագի N1 Համաձայնագրով, ՍԸԱՇՁԲ-10/35-1 պայմանագրի N2 Համաձայնագրով, ԲԸԱՀԱՇՁԲ-10/1-1 պայմանագրով և ՍԸԱՇՁԲ-10/9-4 պայմանագրով՝ սույն հրավերով սահմանված «Էներգետիկ» լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից, ինչպես նաև «Աշխատանք» ՍՊԸ կողմից անհամապատասխանությունների շտկման ժամանակ ներկայացվել է ՍԸԱՇՁԲ-10/6-1 ծածկագրով պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունը, հարկային հաշիվը, տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, սակայն բացակայում էր ՍԸԱՇՁԲ-10/6-1 ծածկագրով պայմանագիրը, ինչն էլ չի քննարկվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոնշյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ որոշեց մերժել «Աշխատանք» ՍՊԸ հայտը և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով վերջինիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

1.2 ***17.06.2019թ.*** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ մերժել «Աշխատանք» ՍՊԸ-ի հայտը և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Աբակ» ՍՊԸ-ին:

1.3 Հանձնաժողովը որոշեց «Աբակ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

1.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել «Աբակ» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել «Աբակ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 12:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Սաֆարյան
Գնումները համակարգող՝	Մ. Հոխեյան